ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 5-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ գրական վիճաբանական երեկո։ Ներկա էր Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ և դասախոսական կազմով։

Նախ գործադրության դրվեց գեղարվեստական մի հայտագիր։ Ճեմարանի երգչախումբը կատարեց Մ. Եկմալյանի «Ով Հայոց աշխարհ», Կոմիտաս վարդապետի «Ով դու բարեկամ» և «Առավոտուն բարի լուս» խմբերգերը։ Ա դասարանի ուսանող Վահագն Համբարձումյանը արտասանեց Մ. Պեշիկթաշլյանի «Գարուն» բանաստեղծությունը։ Ա լսարանի ուսանող Սասուն Վարդանյանը ընթերցեց իր շարադրությունը՝ «Ասք Ավարայրի մասին»։

Հանդիսության երկրորդ բաժինը ուներ վիճաբանական բնույթ։

Վեհափառ Հայրապետի թելադրությամբ, Գ լսարանի չորս ուսանող սարկավագները պատրաստել էին «Վարդա՞ն թե Վասակ, Ավարա՞յր թե դիվանագիտություն» վիճաբանական նյութը։ Բարեշնորհ Գրիգոր և Դավիթ սարկավագները գրավոր ճառերով պաշտպանեցին Վարդանի դիրքը, Եղիշե և Հովհաննես սարկավագները՝ Վասակի քաղաքականությունը։

Այնուհետև տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ուսանողներ Ա լսարանից Կ. Գալստյանը, Արգար Մարտիրոսյանը, Վրեժ Ներսիսյանը, Գ դասարանից Հակոբ Նալբանդյանը, Արմեն Ասրյանը, Ա. Գալստյանը և ուրիշներ։

Վիճաբանությանը մասնակցեցին նաև Մայր Աթոռի միաբաններ հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը, Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պողպալյանը, Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը, Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը, Հոգևոր Ճեմարանի դասախոսներ Գ. Գյուլլանը, Ս. Անթոսյանը և ուրիշներ։

Վիճաբանությունը վարեց և արդյունքներն ամփոփեց դասախոս Ա. Հատիտյանը, եզրակացնելով, որ արդար, ճիշտ և անփոփոխելի է պատմության վճիռը Վարդանի և Վասակի մասին։ Վարդանը տեսիլքի, խոյանքի, հայրենասիրության կերպարն է, Վասակը՝ հաշիվների և փառասիրության մարդը։

* * *

Մարտի 6-ին, կիրակի (Անառակին), Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Նշան քահանա Բեյլերյանը։ Հավուր պատշաճի քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Զի եղբայր քո այս մեռեալ էր և եկաց, կորուսեալ էր՝ և գտաւ» բնաբանով։

* * *

Մարտի 10-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Մայր Աթոռ ժամանեց գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, որը շուրջ երկու ամիս գտնվում էր Հնդկաստանում և Ավստրալիայում հովվական այցելությամբ։ Սրբազան հորը Երևանի օդանավակայանում դիմավորեցին հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը և բարեշնորհ Դավիթ սարկավագ Դիլանյանը։

* * *

Մարտի 11-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում, գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը։ Օրակարգի հարցերից հետո, գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը զեկուցեց իր Հնդկաստան և Ավստրալիա կատարած հովվական այցելության մասին։

* * *

Մարտի 12-ին, շաբաթ, երեկոյան ժամը 8-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրա-

հում, Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը բանախոսեց իր Հնդկաստան և Ավստրալիա կատարած ուղևորության տպավորությունների մասին։ Բանախոսության ներկա էին Մայր Աթոռի միաբանները։ Վերջում Ճեմարանի վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետը շնորհակալություն հայտնեց Տ. Կոմիտաս եպիսկոպոսին շահեկան դասախոսության համար։

***

Մարտի 13-ին, կիրակի (Տնտեսին), Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը «Եւ զովեաց Տէրն զտնտեսն անիրաւութեանն» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մարտի 15-ին, երեքշաբթի, Մայր Տաճար այցելեց սիրիահայ ուխտավորների առաջին խումբը։ Տաճարում իրենց աղոթքն և ուխտը կատարելուց հետո, ուխտավորներն ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։

***

Մարտի 20-ին, կիրակի (Դատաւորին), Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետ Սերայդարյանը «Որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն իւր՝ բարձրասցի» բնաբանով։

***

Մարտի 21-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը, ուր քննության առնվեց և հաստատվեց մարտի 23—24-ին Մայր Աթոռում գումարվելիք ներքին թեմերի խորհրդակցական ժողովի օրակարգն ու հանդիսության ծրագիրը։

***

Մարտի 22-ին, երեքշաբթի, հետմիջօրեի ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց Երևանում Գ. Սունդուկյանի անվան նորակերտ թատրոնի շենքը, ուր ընդունվեց տնօրեն, ժողովրդական արտիստ Գուրգեն Ջանիբեկյանի կողմից։ Այնուհետև, հարգելի տնօրենի առաջնորդությամբ, Վեհափառ Հայրապետը ծանոթացավ շենքի ճարտարապետության, կառուցվածքին, հարկաբաժիններին և նկարազարդումներին։

***

Մարտի 26-ին, շաբաթ, «Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարշարանացն և մտին ի վիրատն»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Որ ի վիրապն անդնդային, ջաղխեր նովաւ զգլուխ վիշապին, ի գրի ներքնումն իջմամբ նորին, բարձրացուցեր զմեզ ի յերկինս» շարականի բնաբանով։

***

Մարտի 27-ին, կիրակի (Դալստեան), Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը «Ով գերազանցեալդ ի հարս սուրբ հայրապետն Լուսաւորիչ Տանս Թորգոմայ Սուրբդ Գրիգորիոս, որ քոյով անտանելի չարչարանօքդ զաշխարհս ամենայն հիացուցեր» շարականի բնաբանով։